ՆՈՐԻՆ ՍՈՒՐԲ ՕԾՈՒԹՅՈՒՆ Տ. Տ. ՎԱԶԳԵՆ Ա ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԵՎ ՄՈՍԿՎԱՅԻ ԵՎ ՀԱՄԱՅՆ ՌՈՒՍԻՈ ՊԱՏՐԻԱՐՔ ԱԼԵՔՍԻ Բ-ի ՀԱՄԱՏԵՂ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ

Մոսկվայում եղբայրական ողջագուրումներով, մենք՝ երկու հնագույն քրիստոնեական եկեղեցիների՝ Հայ Առաքելական եկեղեցու և Ռուս Օրթոդոքս եկեղեցու գահակալներս, ցանկանում ենք մեր խոսքը ուղղել մեր հավատացյալ հոտին՝ համայն մերձավորաց և հեռավորաց:

Հայաստանի և Ռուսաստանի պատմությանը հայտնի են դարաշրջաններ, երբ մեր ժողովուրդները ապրում էին կա՛մ տարբեր պետություններում, կա՛մ մեկ երկրի կազմի մեջ: Սակայն մենք վկայում ենք, որ բոլոր դարերի ընթացքում մեր երկու եկեղեցիները և նրանց ժողովուրդները ամրացված են եղել իրար բազում եղբայրական կապերով, ի Քրիստոս Հիսուս:

Մեր պատմական ընդհանրությունը, որի օգտակարությունը հաստատված է կյանքի փորձով, վեր է որևէ բաժանումից՝ ներքերված նոր իրականությամբ: Անկախ նոր սահմանների, պետական կառավարման ձևերի և արտաքին տարբեր հանգամանքների դասավորումից, երկու եկեղեցիների զավակների միջև հոգևոր, մշակութային և այլ կապերն ու փոխադարձ գործակցությունը կպահպանվեն և կրազմապատկվեն:

Մենք հաստատակամ ենք բոլոր քրիստոնյաների հոգևոր միասնականության և մեկ Աստուծո հավատացող բոլոր մարդկանց միջև բարի հարաբերությունների ամրապնդմանը: Այս կապակցությամբ մենք հատուկ կերպով ձգտում ենք քրիստոնյա-մուսուլմանական հարաբերությունների միջև հիմնել և հաստատուն պահել պարզ ու փոխադարձ հարգանքի ոգին:

Մեզ խորապես վշտացնում է Լեռնային Ղարաբաղում շարունակվող եղբայրասպան պատերազմը: Մենք կոչ ենք անում բոլոր նրանց, ովքեր ներգրավված են այս ընդհարման մեջ, անհապաղ դադարեցնել բոլոր ռազմական գործողությունները, որպեսզի բարդ խնդիրները լուծվեն արդարացիորեն և խաղաղ կերպով, երկխոսության ու համաձայնության հասնելու ձգտումով: Մենք նաև խնդրում ենք համաշխարհային հանրությանը՝ օգնելու Ղարաբաղի հարցի խաղաղ կարգավորմանը և ձգտելու ամեն կերպ թեթևացնել բախման զոհերի տառապանքները:

Մեր եկեղեցիների բոլոր զավակներին, աշխարհի բոլոր մարդկանց հղում ենք խաղաղության, բարօրության և հաջողության մաղթանքներ՝ ամեն մի բարի գործում:

„Եւ ինքն Տէր խաղաղութեան՝ տացէ ձեզ խաղաղութիւն յամենայն ժամ յամենայն իրս" /Բ Թես. 3, 16/:

ստորագրություն
ՎԱԶԳԵՆ Ա ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ
ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ստորագրություն
ԱԼԵՔՍԻ Բ ՄՈՍԿՎԱՅԻ ԵՎ ՀԱՄԱՅՆ
ՌՈՒՍԻՈ ՊԱՏՐԻԱՐՔ

Մոսկվա, 21 հունվար 1993 թ.

digitised by A.R.A.R.@